

ԼԱՏԻՆԵՐԵՆԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԻՆՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Լեզվի բառային կազմի համալրումը մոր բառամիավորներով տեղի է ունենում երկու ճանապարհով՝ ներքին և արտաքին: Բառապաշարի հարստացման առաջին ուղին, լեզվի բառակազմական օրինաչափություններն ու հնարավորություններն օգտագործելով, մոր բառամիավորներ կերտելն է: Երկրորդ ուղին բառային կազմի համալրումն է այլ լեզուներից ներմուծված բառամիավորներով՝ փոխառություններով՝ մշակութային և լեզվական մի երևույթ, որը հատուկ է բոլոր լեզուներին իրենց զարգացման բոլոր փուլերում: Հայոց լեզվի բառային կազմն ունեցել է մշտական զարգացման և հարստացման ընթացք՝ արտահայտելով ժողովրդի կյանքում կատարված փոփոխությունները, հասարակական - քաղաքական կյանքում կատարված տեղաշարժերը: Միջին հայերենում եվրոպական փոխառությունների ուսումնասիրությունը վկայում է այն փաստի մասին, որ դրանք քանակապես թեև զիջում են արաբական, պարսկական և թուրքական փոխառություններին, սակայն հայոց լեզվի՝ մասնավորապես միջին հայերենի բառապաշարի վրա զգալի ազդեցություն են թողել:

Հայոց լեզվի քննարկվող շրջանում պատկառելի թիվ են կազմում լատիներենից կատարված փոխառությունները: «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» ձեռնարկում արձանագրված է 51 լատինական փոխառություն, միջին հայերենի բառարանում՝ 92: Համեմատելով և ի մի բերելով նշված ցանկերը, որոշակի ճշգրտումներ մտցնելով դրանց մեջ և հաշվի առնելով միջնադարյան բնագրերի ուսումնասիրությունների արդյունքում մեր ստացած տվյալները՝ գտնում ենք, որ հայոց լեզվի այս հատվածում լատինական փոխառությունները 103 են:

Լատինական բառափոխառությունների մեր ցանկում արձանագրված է չեն միջին հայերենի բառարանում տեղ գտած ամսանունները, քանի որ դրանք

հայոց լեզու են մուտք գործել դեռևս հինգերորդ դարում հունարենի միջնորդությամբ: Մեր ցանկում տեղ չեն գտել նաև բրեֆեթ (*praefectus* (լատ.), *prefet* (հֆր.)) «վարչական զինվորական պաշտոն հին Հռոմում», բրոցիսոն (*prubuhon*) (*processio* (լատ.), *procession* (ֆրանս.)), մաճիստր (*մայճիստր*) (*magister* (միջ.լատ.), *magistere* (հֆր.)), Մաճոր < *major*, ճերման (*germanus* (լատ.), *germane* (իտալ.)), ճուբիդեռ *Juppiter* գոյականները: Նշված բառերի հնչյունական տառադարձման քննությունը մեզ հանգեցնում է այն համոզման, որ առաջին երեքը միջին հայերեն են մուտք գործել ֆրանսերենի, իսկ վերջիններն՝ իտալերենի միջոցով. բրեֆեթ գոյականը ֆրանսիական փոխառություն դիտելը պայմանավորված է նախ և առաջ բառամիջի [k] հնչյունի բացակայությամբ (լատինական վերջավորությունները միջին հայերենում հիմնականում չեն պահպանվում), բրոցեսիոն բառը ֆրանսերենից փոխառված համարելու համար հիմք է ծառայել նրա սիոն, (սիոն) վերջավորությունը (*sio* (լատ.), *ssion* (ֆրանս.)): Հաջորդ երեք բառերը չէին կարող լատիներենից անմիջականորեն փոխառված լինել, քանի որ g (*[g]*) և j (*[j]*) գրերի ճ-ով տառադարձվելը հնչյունափոխական ոչ մի կանոնով հնարավոր չէ բացատրել, մինչդեռ ֆրանսերեն կամ իտալերեն *[d]* հնչյունի ճ-ով տառադարձումը լիովին համապատասխանում է միջին հայերենի արտասանական կանոններին: Լատիներենից միջին հայերեն մուտք գործած փոխառությունների մեր ցանկում արձանագրված չեն նաև ալաբիստոն < *albiston*, ափշեղ(ք) < *apsilae* (մեր կարծիքով վերջինս միջին հայերեն է մուտք գործել արխագերենից) և լուսենիոն < *lucenga* գոյականները, քանի որ մեր ծեռքի տակ եղած բառարաններում մեզ չի հաջողվել գտնել դրանք: Միջին հայերենի բառարանում արձանագրված ռոտինատ «աչքի ցանցենու բորբոքում» գոյականի փոխատու *retinilis* միավորը նույնպես մեզ չհաջողվեց գտնել: Մեզ թվում է, որ այն կազմված է *retinus* «ցանցային» ածականից և *itis* «բորբոքում» գոյականից. *retinus* – *us* + *itis* => *retinitis*:

Քանի որ լատիներենից փոխառված բառերը բնորոշ չէին ժողովրդախոսակցական լեզվին և չէին կարող մերվել միջին հայերենի բառազանծի հետ, ժամանակի ընթացքում դրանց մեծ մասը մերժվեց, դարձավ անգործածական և դուրս մղվեց հայոց լեզվից:

Միջին հայերենն ներթափանցած լատինական բառամիավորների ձևաբանական վերլուծությունը վկայում է այն մասին, որ դրանց գերակշռող մասը գոյականներ են (97%), փոխառվել են նաև մեկ բայ (1%) և երկու ածական (2%): Լատինական փոխառությունները, ինչպես եվրոպական փոխառություններն ընդհանրապես, մեծ մասամբ հանդիպում են կիլիկյան միջին հայերենում:

Լատիներենից փոխառված միավորների բառակազմական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ չնայած այն հանգամանքին, որ դրանք միջին հայերենում ընկալվել են որպես պարզ բառամիավորներ, փոխատու լեզվում դրանց համարժեքներն ունեցել են ամենատարբեր կառուցվածքներ. պարզ (առմաշ, գութլա, լունայ, մնուր, ուրպ, սօլ, վիգ, տեգրեթ, փորմ, փունդ և այլն), ածանցավոր (բրետետ, գութեմաթօր, ինսթիկաթօր, կոնտրարիենտա, պրիսմըծուխ և այլն) և բարդ (մանիբուլ և այլն):

Ինչպես նշեցինք, լատիներենից մուտք գործած բառամիավորների ճնշող մասը գոյականներ են: Դրանց ճնշող մասը ենթարկվում է այդ հոլովման, գուլարբի և կերոտի գոյականները ենթարկվում են *ու* հոլովման.

ուղղ.	պրացօլ	ստամին	տուլուն	գուլարբի	կերոտի
սեռ.	պրացօլի	ստամնի	տուլունի	գուլարբու	կերոտու

Հոլովման ժամանակ շեշտագրկված ծայնավորը հնչյունափոխվում է. այն շատ հաճախ սղվում է կամ վերածվում *ը*-ի, որը գրության մեջ կարող էր արտահայտված չլինել. *դուքս-դքսի*:

Լատիներենից	միջին	հայերեն	ներմուծված
-------------	-------	---------	------------

բառափոխառություններում արձանագրված է երկու ածական, «որոնց կեսը հայակերպ է և կեսն օտարակերպ»¹: Դրանք երկուսն էլ կրել են ձևաբանական փոխակերպումներ, փոխառվող լատինական բառամիավորների վերջավորությունները փոխարինվել են *-ական* ածականակերտ վերջածանցով. *gerundium* – *um* => *գերունդի* + *ական*, *supin* – *um* => *սուփինն* + *ական*:

¹ Սյտընյան Ա. Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, էջ 289:

Լատիներենից փոխառված միակ բայը՝ *նոթրել* < *nutrix* նույնպես ենթարկվել է ձևաբանական փոխարկման. լատինական բայարմատին ավելացել է *-ել* բայական վերջավորությունը: Ե խոնորհման ներգործական սեռի այս բայը խոնարհվում է ենթարկվելով այդ խոնարհման բոլոր կանոններին (կու նոթրեմ, կու նոթրեհնաք):

Լատիներենից փոխառված բառերից երեքը, ենթարկվելով հայերենի բառակազմական կանոններին, կազմել են մոր բառամիավորներ. *դաղմատ* < *dalmaticus* «ֆրանկ կաթուղիկ» գոյականից միջին հայերենում կազմվել է դաղմատերեն «դալմատերեն, լատիներեն» գոյականը: *Դալապր* < *dolabra* «կացին» գոյականը, ստանալով ել բայական վերջավորությունը, կազմել է Ե խոնարհման պատկանող դալապրել «կացնահարել» բայը: Ինչպես տեսնում ենք, վերջին դեպքում տեղի է ունեցել ձևաբանական փոխակերպում (գոյական > բայ):

Երբեմն միևնույն իմաստն արտահայտելու համար փոխառվել են մի քանի բառեր, որոնք հաճախ իրենց հայերեն համարժեքների հետ կազմել են հոմանշային շարքեր: Այսպիսի փոխառություններն ընդունված է անվանել կրկնակ.

դրիպոն < *tribunus*, *ինսթիկաթոր* < *instigator* «առաջնորդ»,

բրտուտ < *praeses*, *զոնսուլ* < *consul* «կուսակալ»,

քլալուստր < *claustrum*, *զլոստր* < *clostrum* «վանք»,

ադվոգայթ < *advocatus*, *աքթոր* < *actor* «փաստաբան»:

Լատիներենից ներմուծված բառամիավորները հիմնականում մենիմաստ բառեր են. բուլ «պապական կոնդակ», դալապր «կացին», լունայ «լուսին» և այլն: Եվրոպական փոխառությունների այս շարքում հանդիպում է չորս բազմիմաստ բառ. *ակտար* < *actarius* 1. «քարտուղար», 2. «հաշվետար», լադրիա 1. «խոնարհություն», 2. «պաշտամունք», *սիգել* < *sigillum* 1. «կնիք», 2. հրամանագիր, հրովարտակ, գրավոր հրամանը պարունակող կնքված թուղթ՝ գրություն», 3. պապական կոնդակ»:

Լատինական փոխառություններում հանդիպում են այնպիսի բառամիավորներ, որոնք ինչ-որ չափով շեղվել են իրենց նախնական նշանակությունից. *բրեվիար* գոյականը միջին հայերենում նշանակել է

«ժամագիրք», մինչդեռ նրա փոխատու բառը լատիներենում՝ «տեսություն, գրական հանդես», *ինսպիկաթոր* «առաջնորդ» գոյականը փոխառվել է *instigator* «սադրիչ»-ից, *մորեստան* գոյականը, որի փոխատու՝ *mora* բառը լատիներենում ունեցել է «կանգ առնելը, իջևանելը» իմաստը, քննարկվող ժամանակաշրջանում նշանակել է «օթևաններ, իջևանատներ»։ *Ռեքլմար* գոյականի փոխատու *recitator* գոյականը լատիներենում ունեցել է «բարձր կարդացող, զեկուցող» իմաստը. միջին հայերենում տեղի է ունեցել իմաստի նեղացում, և այն գործածվել է «պալատական պաշտոնյա, որը թագավորի առաջ կարդում է հայտագրեր, զեկուցագրեր, փաստաթղթեր» իմաստով։

Եթե փոխատու միավորը բազմիմաստ էր, ապա նրա նշանակություններից ընտրվում էին այնպիսիք կամ այն, որը կամ որոնք բացակայում էին միջին հայերենում, կամ որպես երևույթ նորամուծություն էին միջնադարյան Հայաստանում։ *Աթոր* բառն, օրինակ, միջին հայերենում նշանակել է «փաստաբան», մինչդեռ նրա փոխատու լատիներեն *actor* գոյականը բազմիմաստ բառ էր՝ 1.«գործող, գործողության մեջ դնող», 2.«քշող, գրաստավոր», 3. «հեռուոր», 4.«կատարող, իրագործող, կատարածու», 5.«միջնորդ, փաստաբան դատապաշտպան», 6.«վարիչ, գործերի կառավարիչ»։ *Arma* գոյականը լատիներենում ունեցել է 1.«գործիք, միջոց, հրանոթ, արկ, ռումբ», 2.«հանդերձում, հանդերձելը, հանդերձանք», 3.«նարտական՝ ռազմական ուժեր», 4.«պատերազմ», 5.«ռազմական գործողություններ», 6.«զինվոր» նշանակությունը, միջին հայերեն այն փոխառվել է որպես մեծիմաստ բառ. առմաշ(արմաշ) «ոստիկան, զինվոր», պավլին «քահանայապետական էմփոորոն, պալիոն» գոյականը փոխառվել է *pallium* 1. «ծածկ, վարագույր», 2. «դազաղի ծածկոց, վարշամակ», 3.«հունական լայն թիկնոց» գոյականից։ Նման օրինակները կարելի է շարունակել. *վիզայր* «տեղակալ, տեղապահ, թեմի առաջնորդի փոխանորդ, հոգևոր, բարձրաստիճան պաշտոնյա» < *vicarius* 1.«տեղակալ», 2.«ստրուկի օգնական, ստրուկի ստրուկ», *փորմ* «ծև» < *forma* 1.«ծև, արտաքին տեսք», 2.«արտաքին, պատկեր», 3.«զեղեցկություն», 4.«կերպար», 5.«կաղապար, ձև», օկասիա «պատերազմի ժամանակ կամ արտակարգ դեպքերում վճարվող հարկ» 1.«դեպք, առիթ», 2.«հանկարծակի հարձակում» և այլն։ Իմաստային

այսպիսի յուրացումը հանգեցնում է բազմիմաստության վերացման: Փոխառվում էր բառի հիմնականում տերմինային արժեք ներկայացնող իմաստը:

Չնայած լատինական փոխառությունները պատկանում էին գրական լեզվին, օտար էին խոսակցական հայերենին, բայց մեզ թվում է, որ դրանցից մի քանիսը պահպանվել են լեզվում և որոշ փոփոխություններով հասել մինչև աշխարհաբար: Նշենք մի քանի օրինակ. *բադրիկ* < *patricius* պատրիկ, *Մերկարիուս* < *Mercurius* Մերկուրի (Փայլածու մոլորակը), *Մարս* < *Mars* Մարս (Չրատ մոլորակը), *սենատոր* < *senātor* սենատոր (ծերակույտի անդամ): Նշված բառամիավորները համարվում են նոր շրջանի փոխառություններ, քանի որ դրանց գործածությունը որոշակի ժամանակահատված ընդհատվում է:

Բառափոխառությունների համար, որպես կանոն, հիմք են ծառայում ներմուծվող միավորի եզակի թվի ուղղական հոլովը, սակայն *աքթա* «գործ, փաստաթուղթ» և *սիզմայ* «մարտական դրոշ, դրոշակ» բառը յուրացրել են իրենց փոխատու բառերի հոգնակի թվի ձևերը.

եզ. *actum* *signum*

հոգն. *acta* *signa*

Լատիներեն փոխատու բառերի ստուգաբանական քննությունը, մեզ հանգեցնում է այն մտքին, որ միջին հայերենի բառարանի հեղինակների կողմից անմիջական համարվող փոխառություններից մի քանիսը միջնորդական են: Օրինակ՝ *լադրիա* գոյականի համար որպես փոխատու միավոր նշված բառարանում հանդես է եկել լատիներեն *latris* բառը, սակայն այն իր հերթին փոխառվել էր հունարեն *λατρία* գոյականից, *դիապոլուս* գոյականը, որի փոխատու *diabolus* լատիներեն բառն ունեցել է «բաժանող, ատելություն կամ նախանձ ներշնչող» իմաստը, նույնպես ունեցել է հունական ծագում *δία* – *βλάλλω*:

Ինչպես եվրոպական մյուս լեզուներից ներմուծված բառամիավորները, այնպես էլ լատինական փոխառությունները միշտ չէ, որ իրենց տեղը զիջել են իրենց հայերեն համարժեքներին: Դրանք երբեմն փոխարինվել են մեկ ուրիշ լեզվից կատարված նոր փոխառություններով կամ հայոց լեզվում արդեն իսկ գոյություն ունեցող իրենց հոմանիշ բառերով, որոնց

մեջ կային դեռևս գրաքարյան շրջանում կատարված փոխառություններ, որոնք ընկալվում էին արդեն որպես հայկական արմատներ: Օրինակներ. *գոյգոյմերես* < *cucumeres* > *վարունգ* (իրան.), *կուպայ* < *cupa* > *բաժակ* (պահլ.), *դէկրէթալ* < *decrebuntum* > *հրաման* (պահլ.), *գաթիդոլ* < *capitolium* > *պալատ* (հուն.) և այլն:

Լատիներենից ներմուծված բառերը ժողովրդախոսակցական լեզվում համարյա անգործածական էին, դրանք ամփոփված են հիմնականում իրավագիտական աշխատություններում և վերաբերում են կրոնի, պաշտոնավարության, իրավաբանության և ռազմական ոլորտներին: *Կենցաղին* և առտնին կյանքին վերաբերող բառամիավորներն այստեղ անմշակ թիվ են կազմում: Լատինական փոխառություններն ընդգրկում են իմաստային դաշտերի լայն շրջանակ և կիրառվում են գործառական տարբեր ոճերում:

Մեր ուսումնասիրությունների արդյունքում լատինական բառափոխառությունները դասակարգվում են տասնյոթ իմաստային դաշտերում: Ամենից շատ բառամիավոր պարունակում են «Պետականություն» (27,1%) և «Կրոն» (20,3%) իմաստային դաշտերը: Այս հանգամանքը վկայում է միջնադարյան Հայաստանի, մասնավորապես Կիլիկիայի Հայկական Թագավորության Հռոմեական կայսրությունից կրած կրոնական և վարչաքաղաքական ազդեցության մասին: Միջին հայերենում լատինական փոխառությունները կարելի է դասակարգել իմաստային երկու խմբի. տերմինային և ոչ տերմինային արժեք ներկայացնող բառամիավորներ: Առաջին խմբի բառերը գործածվում են հիմնականում գիտական, վարչագործառական ոճերում, երկրորդ խմբինը՝ առտնին խոսակցական:

Առաջին մասի բառամիավորների թվին են դասվում հետևյալ իմաստային դաշտերի բառամիավորները. «Պետականություն», որտեղ հանդիպում են պաշտոն (*արվոգայթ*, *աքտար*, *բադրիկ*, *բրետտ*, *գոնսուլ*, *գուբեռնաթոր*, *դրիպուն* և այլն), տիտղոս (*դուքս*, *կոմս*) նշող բառեր. «Իրավաբանություն» դաշտի մեջ ամփոփված են օրենքն արտացոլող տերմիններ (*դէկրէթալ*, *տէգրէթ*, *կոնտրարիետալ*), «Կրոն» իմաստային դաշտն իր մեջ ներառում է եկեղեցական ծեսերին վերաբերող (*գուբլայ*, *սքրեթ*, *եկեղեցու գուլքը բրեվիար*, *միսալ*) և եկեղացական աստիճաններ (*գլեբրիկոս*, *գուբեռնաթոր*, *գոնօնիկոս*, *դաղմատ* և այլն) նշող բառամիավորներ.

«Գործավարություն, առևտուր» (աքքա), «Բուսական աշխարհ» (աղորդսընդաս, անադալիս, գաբիլուս վեներիս, գաւրատաւմեմ, գոյգոյմէրէս, գոյրգոմա և այլն), «Բժշկություն», որտեղ ընդգրկված են ատտանուններ (մալաքիայ, ոռտինատ) և կազմախոսական տերմիններ (կալպանում), «Աստղաբանություն» (Լունայ, Մարս, Սաթուռնոս, Վեճուս) և «Ջերականություն». (գերունդիական, սուփինական, սիմթոզիս):

Երկրորդ խումբն իր մեջ ներառում է «Գործողություն, զարգացում, տեղափոխություն, փոխադրում, նավագնացություն» (գամպիւմ), «Շինություն, կառույց, կահկարասի» (կուպայ, մորեստան, տորմիթոր), «Ընտանիք, կենցաղ, առտնին կյանք» (դալապր), «Ուտելիք, ըմպելիք» (տուլուն), «Չագուստ, զարդեղեն» (գաբիլոն, դորգեմ, գուլարբի, կուպաղ, ստամին), «Չափի միավոր», (գաբիդում (գուպիթում), փունդ) և «Չատկանիշ». (լադրիա), իմաստային դաշտերի միավորները:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Այտընյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն յեզվի, Երևան, 1987:

2. Հովնանեան Ղ., Հետազոտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ, Վիեննա, 1921:

3. Մանր ժամանակագրություններ (13-18-րդ դդ.), հ. 2-րդ, Երևան, 1956:

4. Սմբատ Սպարապետ, Տարեգիրք, Երևան, 1956: